ԽԱՌՆՈՒԱԾՔ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ

Մարդու արտաքին երեւոյթէն կարելի է դատել մէկու մը խառնուածքը (tempérament) և հետեւաբար անոր զգալու և հակազդելու կերպերը, այսինքն նկարագիրը։

Լավաթէր՝ նկատի կ'առնէր դիմագծերը, կալ գլխու ձեւերը եւն., որոնք իրականին մէջ որ և է արժէք չեն ներկայացներ։

Բնախօսական արտայայտութիւններ, (սննդառական վիճակ, մըկաններու կծկում և արեան շրջանառութիւն) կրնան իբրեւ իրական հիմ ծառայել մէկու մը խառնուածքը և նկարագիրը գուշակելու համար։

Անոնց մէջ ուրեան շրջանառութեան արտայայտութիւնները թէեւ աւելի սահմանափակ, բայց աւելի ճշդիւտ տեղեկութիւններ կրնան տալ։ Որովհետեւ, անհատ մը կրնայ խաբուսիկ շարժումներով և դէմքի կծկումներով սխալ գաղափար կազմել տալ իր մասին, բայց չի կրնար զսպել սրտի բաբախումները կամ փոխել դէմքի գոյնը, որ կախում ունի արեան շրջանառութենէն։ Այս վերջինն ալ ենթակայ է անհատի սննդառութեան և ջղային դրութեան վիճակին։

Մորթի գոյնէն ընդհանրապէս, և չծածկուած մասերու (դէմք, վիզ կուրծք, թեւ) մորթի գոյնէն մասնաւորապէս, շատ շահեկան տեղեկութիւններ կարելի է քաղել, ճշդելու համար խառնուածքները, որոնք չորս տեսակի կը բաժնուին, համապատասխան նկարագիրներով և բնաւորութիւններով.— արիւնայիններ, աւշայիններ, մաղձայիններ և ջղայիններ։

***

ԱՐԻՒՆԱՅԻՆՆԵՐԸ

Արիւնայիններուն (sanguin) արտաքին յատկանիշը այն է որ անոնց մորթը ջերմ և կարմիր է, հուզաթաղանթները նոյնպէս։ Բազկերակը լեցուն կը զարնէ և արեան անօթները ընդլայնած են։ Արիւնով այս առատ ոռոգումը հիւսուածներուն սննդառութեան լաւ կ'ազդէ։ Անոնց ձայնը հնչեղ է, այտերը՝ կլոր, դէմքերը՝ ժպտուն։ Մեծ շարժումներ կ'ընեն։

Արիւնայինները լաւատեսներ են. կը սիրեն կեանքը և դիւրին հաճոյքները։ Ցաճախ սնափառ և ինքնագով են և յաջողութեան արտաքին ձեւերը կը գնահատեն։ Ջեն նախանձիր, բարեացակամ են և

բարի, անկեղծ ու անձնուէր բարեկամներ կրնան ըլլալ։ Միշտ պատրաստ ճիգի և աշխատանքի անոնք կը սիրեն շարժումը, պարզապէս շարժելու հաճոյքին համար։ Անոնց համար շարժումը ուտելու և խմելու չափ անհրաժեշտութիւն մըն է։ Անոնց կամքը աւելի ինքնաբուխ է քան յարատեւ ու անփոփոխ։

ԱՒՇԱՑԻՆՆԵՐԸ

Աւշայիններուն (lymphatique) քով մորթային ճարպը առատ է։ Իրենց դէմքը գունատ, վարդագոյն է, կլոր գիծերով, հաստ շրթունքներով և թոյլ այտերով։ Իրենց շարժումը դանդաղ է, ձայնը՝ հանդարտ, ձեռքերը՝ յաճախ պաղ և խոնաւ են։

Արեան շրջանին և սննդառութեան դանդաղութեան հետեւանքով, անոնց նկարագիրը թոյլ և անհոգ է։ Զգացումով հեզաբարոյ և չափաւոր են, դիւրաւ չեն ոգեւորուիր և շատ զգայուն չեն բուռն կիրքերու հանդէպ։ Միջակ գործունէութիւն մը ունին. կը խուսափին յուզումներէ, ճիգերէ նախամեծար համարելով անփոյթ հանդարտութիւն մը։

ՄԱՂԱՑԻՆՆԵՐԸ

Մաղձայիններու (bilieux) մորթը դեղին, տաք և չոր է։ Ճարպը քիչ է, որու հետեւանքով բազմախորշ դէմք մը ունին, ցցուն ոսկորներով։ Իրենց երեսը ձիթագոյն է, յաճախ երակներով գծաւորուած, այտերը՝ տափակ, աչքերը՝ փոսացած և կարծրենիները՝ (աչքին ճերմկուցը) դեղնորակ են։

Մաղձայինները կրքոտ, դիւրաբորբոք և խիստ բնաւորութիւն մը ունին։ Ցաճախ կը բարկանան և քինախնդիր են։ Աւելի հպարտ են, քան սնափառ, իշխող և բռնակալ են և կ'ուզեն շարունակ իրենց կամքը պարտադրել ուրիշին։

Իրենց բնաւորութեան չափ, կրքոտ և եռանդոտ է իրենց գործունէութիւնը։ Ցանդուգն են և ձեռներէց. միշտ կը ձգտին դէպի ոյժ և յաղթութիւն ու այդ նպատակին հասնելու համար անխոնջ ճիգ կը թափեն։

ՋՂԱՑԻՆՆԵՐԸ

Ջղայինները (nerveux) գունաթափ են, նուրբ գիծերով. մկանները՝ քիչ զարգացած են։ Ջղային գործունէութիւնը գերակշիռ է մարմնին միւս գործունէութիւններուն վրայ։

Ոմանց քով ջղային—մկանային գործունէութիւնը շեշտուած չէ։ Ասոնք տկար ջղայիններ են տխուր, երկչոտ, անձկութեան ենթա-

կայ. կասկածոտ և խղճահար կ'ըլլան և յաճախ իրենց տկար կամքը կը փոխարինեն ներքին ներոյժ կեանքով մը։ Ասոնց մէջէն է որ կ'ելլան գիտուններ, փիլիսոփաներ և մեծ խորհողներ։

Ուրիշներու քով, ընդհակառակն, ջղային — գնդերային գործունէութիւնը շատ չեշտուած է։ Զօրաւոր ջղայիններ են. անհանդարտ և սաստիկ յուզուող են և յուզումի վիճակները զօրաւոր կ'արտայայտեն։ Իրենց զգացումները բուռն և յորդառատ են, բայց կարճատեւ։ Իրենց կամքը անհաւասար է և քմահաճ։ Փայլուն և զօրաւոր իմացականութիւն մը ունին և օժտուած են հազուագիւտ երեւակայութեամբ մը։ Ահա թէ ինչու մասնաւոր ընդունակութիւն և հակում ունին դէպի արուեստները, նուագը, նկարչութիւնը, գրականութիւնը և թատրոնը։

Ասոնք են խառնուածքներու չորս գլխաւոր տիպարները, համապատասխան հոգեկան պատկերներով։ Անշուշտ շատ ամփոփ են եւ բազմաթիւ բացառութիւններ կան։ Միւս կողմէ այս պարզ տիպարները կրնան միանալ մէկ անձի մօտ և բարդ տիպարներու ծնունդ տալ։

Էականը այն է որ մորթի գոյնէն և արեան ոռոգումէն կարելի է գտնել մէկու մը խառնուածքը և հետեւաբար նկարագիրն ու բնաւորութիւնը։

Ամփոփեց՝ Ս. ԲԱՐՍԵՂԵԱՆ — ՏՕՔԹ. Բ. ՀԱՐԹԷՆՊԷՐԿ

ԸՆԹԵՐՑՈՂ

ԴՈՒՆ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»ը, քանի որ բաժանորդագրուած ես, կը կարդաս և կ'օգտուիս։

ՁԵ՞Ս ՈՒԶԵՐ ՃԻԳ ՄԸ ԸՆԵԼ, տարածելու համար քու թերթդ, բաժանորդագրելով ծանօթներդ կամ նուիրելով տարեկան օրինակ մը, Հայաստանի կամ Գաղութներու հանրային հաստատութիւններէն մէկուն (դպրոց, որբանոց, ընթերցարան), որպէսզի ուրիշներն ալ կարդան, սիրեն և օգտուին «Բուժանք»էն և զարգացնեն զայն։

ԴՈՒՆ ԱԼ ԿԸ ՍԻՐԵՍ ԵՒ ԿԸ ԿԱՐԴԱՍ «Բուժանք»ը, բայց ուրիշէն ղրկուածը։ Գիտցիր սակայն որ չի բաւեր կարդալ, այլ պէտք է ունենալ և պահել «Բուժանք»ը, որ ամէն ատեն կրնայ քեզի համար թանկագին խորհրդատու մը ըլլալ։

ՈՒՍՏԻ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԷ, ԿԱՐԴԱ՛ ՈՒ ՏԱՐԱԾԷ «ԲՈՒԺԱՆՔ»ը։